

ԱԿԱ ՉԱՆԳԸ ԿԸ ՀՆՉԷ

Կրթական վերամուտին առթիվ, անգամ մը եւս ահա զանգը կը հնչէ, ազդանշանը տալով նոր տարեշրջանի մը սկզբնաւորութեան: Չանգը, սակայն հիմնականին մէջ աշակերտներուն համար է, մինչդեռ պատասխանատուներուն համար զանգ գոյու-թիւն չունի: Որովհետեւ կրթական գործը, տարուան ամբողջ տեւողութեան ընթացքին, իրեն յատուկ աշխատանքները ունի, որ զանգով բաժնուած մասեր չունի:

Ահա զանգը անգամ մը եւս կը հնչէ եւ մեր ժողովուրդի զաւակները դարձեալ կ'ուզողուն դէպի վարժարաններ: Տարուան բոլոր հանգրուաններէն ամէնէն աւելի վերամուտին է, որ հարց կու տանք, թէ արդեօք այս տարի ի՞նչ է համեմատութիւնը ոչ հայկական վարժարան յաճախող հայ աշակերտներուն: Անշուշտ, ամէն անգամ ոչ հայկական վարժարան յաճախող հայ աշակերտներուն պիտի ըլլանք զարմանազան լուրերով, որոնք գոհունակութիւն պիտի պատճառեն ոչ հայկական վարժարան զաւակ ուղարկող ծնողներուն, արդարացուցիչ «որովհետեւ»ներու շարանի մը պաշտ-պանողականով:

Եւ ահա զանգը կը հնչէ աշակերտներուն համար, մինչդեռ մեզի՝ մնացեալներու համար ԱՀԱՁԱՆԳԻՆ է, որ կը հնչէ:

Ահա զանգի առաջին ըմբռնումը ունեցած ենք մեր մանկութեան տարիներուն թրիփոլի մէջ, երբ քաղաքին սովորութիւնն էր, քաղաքացիական վարժութեան համար, ամէն Հինգշաբթի օր հըշէններու կեդրոնին գագաթէն ահազանգ հնչեցնել: Այս տարօրինակ եւ ոչ հաճելի ձայնին իմաստը եւ պատճառը հասկնալէ ետք, մանկա-կան միտքին համար անհասկնալի մնացած էր ահազանգ հնչեցնելու պատճառը՝ երբ վտանգ կամ թշնամի չկար, որպէսզի մարդիկ պատրաստուին վտանգը դիմագրաւե-լու...:

Չանգը կրնայ հնչել մէկ կամ աւելի անձերու համար, բայց ահազանգը կը հնչէ միայն հաւաքականութեան մը, քաղաքի մը ընկերութեան կամ երկրի մը համար:

Յետ եղանակեան տարիներուն, Սփիւսի մէջ ինքզինք վերականգնող հայուցեան կեանքին մէջ, ազգային բարձր դիրքերէ սկսան լսելի դառնալ ահազանգային կոչեր, տակաւին այդ օրերուն՝ վրայ հասնելի վտանգին մասին: Կարմիր ջարդէն վերապը-րած հայը սկսած լսել ճերմակ ջարդի մասին, որ կրնար շատ աւելի մահացու ըլլալ քան կարմիր ջարդը: Հայութեան նոր սերունդները, կենսամակարդակի բարելաւու-մով, քիչ առ քիչ, անադմուկ եւ անտեսանելի ճերմակ ջարդին գոհ կ'երթային:

Եկեղեցույ հայրերու աղօթքներուն մէջ յաճախական է Աստուծոյ հայցել երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէ փրկուելիս: Մանաւանդ աներեւոյթ թշնամիներէ, որոնց դարանակալ մուտքը մեր կեանքին մէջ մահացու վտանգ մըն է:

Ահազանգը ինքնին վտանգը չէ, այլ անոր գալուստը ազդարարող, կանխագու-շացնող կոչ: Ահազանգը աներեւոյթ բայց գալիք վտանգին դիմադրելու, պատրաստ ըլլալու կանչ է: Եւ որովհետեւ գալիք վտանգը աներեւոյթ է, ահազանգին նկատ-մամբ մեր ժողովուրդի զաւակներուն անտարբեր եւ անայայտ մնալը կը հասկցուի հաւանաբար անով, որ վտանգը տակաւին աներեւոյթ է եւ հետեւաբար՝ հեռու: Բայց ի՞նչ ըսել կամ ինչպէ՞ս բացատրել այսօր հայութեան կեանքին մէջ արմատացող անտարբերութիւնը, ոչ թէ աներեւոյթ, այլ յատկապէս՝ երեւելի եւ զգալի վտանգին նկատմամբ: Բոլորս ալ կը տեսնենք վտանգը, անոր գործած աւերները, եւ... այդու-հանգերձ հայութեան կեանքը կը շարունակուի «խաղաղ» եւ «անվտանգ»: Կամ այն մեր ժողովուրդը պարտեալի հոգեբանութեան, դիմադրելէ յոգնած, հայտուած է իրեն պարտադրուած ճակատագրին հետ եւ յանձնուած անոր հեզնական աւարտին: Հեզնանք՝ վերապրողներու ծով գոհողութեանց եւ վատակիւն հաշուոյն, հեզնանք՝ նահատակներու տաք արեամբ գրուած կտակին: Այսինքն՝

- Ազգային գիտակցութիւնը եւ զգացումը սնուցանող աղբիւրէ հեռացում:
- Հայագիտական նիւթերու դասուանդումը ժամանակավրէպ նկատել:
- Կեանքի ասպարէզին մէջ օտարին կարելիութիւններով եւ միջոցներով անձնա-կան, արագ եւ «ստոյգ» յաջողութեան որոնում:
- Ընտանեկան յարկէն ներս ժողովուրդական, տոհմիկ բարքերու լքում:
- Խառն ամուսնութեան հետեւանքին անփոյթ՝ ներկայի եւ տեղական պայմաննե-րուն հետ հաշտուած ըլլալու չբեղանք:
- Եւ այսպէս, աներեւոյթ թշնամիին այս աւերները մեր մէջ եւ շուրջը զգալի կը դառնան իբրեւ՝
- Ազգային նկարագրի խաթարում:
- Հայօրէն ապրելու արդար իրաւունքէն հրաժարում:
- Հայկական ժողովուրդային արժեքափերու եւ չափանիշներու անհաւատալի ան-կում:
- Ազգային հիմնահարցերու նկատմամբ անտարբերութիւն:
- Սրբութեան յառաջացող խառն ամուսնութիւններով սերունդներու ուժացում:
- Ազգային ոսկիները անձնական նեղ հաշիւներով մանրուք լուծանքով վերածե-լու ապրելակերպ:
- Հայկական ընտանիքներու մթնոլորտի, հոգեբանութեան, մտածելակերպի օտա-րացում:

Եզրակացութիւն. օտար դիմակներ հագած հայեր, թէ հայութենէ պարպուած անձերու դէմքին հայկական դիմակներ:

Այս բոլոր տեսներով, ապրելով, զանգը թողունք աշակերտին, իսկ մնացեալներս ուշադիր ըլլանք ահազանգին:

Ահազանգ:

Բայց ահազանգն ալ դարձած է ժամանակավրէպ եւ անիմաստ: Արդէն վտանգը հասած է եւ սպառնալէ աւելի հայոց մէջ հայութիւնը կը խեղդէ: Իսկ տարօրինակն ու ցաւալին այն է, որ ի տես այս հայաթափումին, մենք մեր կեանքերը կը շարունակենք անայայտ, հանգիստ, որպէս թէ կրակը ուրիշ տան մէջն է ինչպէս:

Ու այսպէս, մեր ականջները ահազանգին խուլ, մեր աչքերը աղիտայի տեսարան-ներու դիմաց խուլի, ճարահատ՝ թաւալըր կը գահավիժին: Կացութիւնը գլուխը առեր կ'երթայ, եւ շերտ առ շերտ կը կտրատէ հայութեան զանգուածային մարմինը, մինչեւ որ ի սպառ կորչի:

Յո՞ երթան հայ ժողովուրդ. կաց:

Բայց ինչ, այս բոլորին վե՞րջը: Արեւմտ, այս բոլորէն վերջ ընդունելի որ հնար չկայ, անյո՞յս է մեր այս վիճակը:

Ո՛չ: Ձի կրնար ըլլալ: Անյոյս չէ մեր վիճակը, տակաւին մեր ձեռքն է ճարն ու դարմանը: Եթէ ահազանգն անգամ չի կարողանար սթափեցնել մեզ, կայ աւելի զուրուր ծայր մը, կարգի հրաւիրող, պատմութեան ընթացքին միշտ ալ ապահով դերս պաշտ է երթը շարունակելու գաղտնիքը քողարկող: Այդ մէկը, հայկական վարժարանի դասարանէն զիւ ձայներով եւ յոյս ներշնչող շեշտերով լսուած երգն է «Թող լռեն մունջը, անդամալոյժը...»:

Այս է գաղտնիքը, երբ ամէն անգամ թաւալըր կ'երթանք: Հայ վարժարանէն լսուած ՁԱՅՆԸ:

Հայ վարժարանին դասարանը, ուր այնտեղ սերունդ կը դաստիարակուի:

Հայ վարժարանն է, հայ դպրութիւնն է եղած ու պիտի մնայ հայ ժողովուրդի գոյատեւման երաշխիքը:

Եւ այսօր, աւելի քան երբեք, այս միջնաբերդը՝ հայ վարժարանն է, որ պիտի կանցնէ մեր գահավիժումը, պիտի սթափեցնէ մեզ մեր մահաբռնէն, պիտի փարա-տէ մեր խաբկանքները, պիտի բանայ մեր ականջները, պիտի մաքրէ մեր աչքերը եւ պիտի պրկէ մեր կեանքերը, ո՛չ ըսելու եւ մերժելու այս կացութիւնը: Որովհետեւ, ինքզինք ճանչցող սերունդն է, որ պիտի մերժէ այս կացութիւնը եւ ինքն է, որ պիտի ՀԱԿԱՉԳԻ:

Հայերէնագիտութեան ազգային սնունդի աղբիւրներէն սնանելով:

Հայօրէն ապրելու հպարտանքը ունենալով:

Հայկական դաստիարակութիւնը ապագայի ասպարէզին արգելք չհամարելով:

Հայկական օճախի կազմութիւնը ազգային պարտականութիւն ընդունելով եւ այդ օճախին տոհմիկ, հայաբոյր, պարզ բայց անգնահատելի մթնոլորտը իր վայելքը նկատելով:

Եւ վերջապէս, վար առնելով հայկական հարագատ դէմքերը ծածկող բոլոր տեսա-կի օտարի խայտաբղէտ դիմակները:

Օրհասի ահազանգը կը հնչէ: Համակերպողները կրնան չլսել ձեռանալ: Բայց, ահա, վերամուտի սեմին, հայկական վարժարանի դասարանէն պիտի շարունակուի լսուելի՝ ճշմարտամային պահուն հոգիներուն մէջ նոր արշալոյսներու յոյր վառող, գալիքին նկատմամբ լաւատեսութիւն ներշնչող, երակներուն մէջ աւելն եւ խանդ ներարկող յուսավառ երգը՝ «Թող լռեն մունջը, անդամալոյժը...»:

Ահա թէ ինչու՞ այսքան գոհողութիւն եւ հաւատք հայ վարժարանին նկատմամբ, որ արդար է, կենաց եւ մահու խնդիր է:

Հայ վարժարանին զանգը կը հնչէ, բայց այս պարագային, ոչ միայն հայ աշակեր-տին համար, այլեւ՝ բոլորին համար, մանաւանդ թերահաւատի ու յոռետեսի համար, յայտարարելով, որ լիբանանահայութիւնը կենսունակ է, կանգուն է եւ վճռած է ապրիլ ու գոյատեւել ինքզինք ճանչցող իր սերունդներով:

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԼԻԱՍ ՍԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ըն-դունեց ներքին գործոց նախարար Էլիաս Սըրը, որ փո-խանցեց ներքին եւ քաղաքագիտութեան հարցերու խորհրդարանական յանձնախումբին մշակած ծրագիր-ները:

Անդրադառնալով քաղաքագիտական ընտրութիւն-ները յետաձգելու հաւանականութեան, Սըրը շեշտեց, որ անոնք տեղի պիտի ունենան ճշդուած թուականին:

Պըրրի խորհրդարանական հերթական հանդիպումին կատարած իր յայտարարութիւններուն մէջ վերահաս-տատեց իր տեսակէտը, թէ տագնապը կառավարական տագնապ չէ, այլ՝ իշխանութեան տագնապ, շեշտելով նման կացութեան դուրս գալու անհրաժեշտութիւնը եւ տագնապին ձգած ժխտական ազդեցութիւնները:

Պըրրի ընդգծեց, որ բոլոր պատասխանատուները պէտք է համագործակցին դիմագրաւելու համար տնտե-սական եւ ընկերային այս կացութիւնը եւ կոչ ուղղեց գործել ամենայն բժարնդրութեամբ, լրջութեամբ եւ խաղաղութեամբ:

Պըրրի հանդիպումները ունեցաւ նաեւ նախարարներ Էլիաս Սըբաֆի եւ Ալի Հասան Ոսայիլի եւ ձեռք բերեալ խա-նքերու հետ:

ՄԻՔԱԹԻ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՍՈՒՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՕԹԱՐԻԻ ՀԵՏ

Հանրագուտ շինութեանց եւ փոխադրութեան հար-ցերու նախարար Նեպիւ Միքայիլ երէկ Դամասկոսի մէջ հանդիպումը ունեցաւ Սուրիոյ վարչապետ Սոհաւէտ Նաթի Օթարիի հետ: Միքայիլ Օթարին շնորհակա-րար զարգացման պաշտօնի ստանձնումին առիթով:

Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Սուրիոյ փոխարտութեան հարցերու նախարար Մաքրամ Օպէյ-յու, ինչպէս նաեւ լիբանանահայտնական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Ոսուրի:

Հանդիպումին քննարկումի առարկայ դարձան Պէյ-րուտ – Դամասկոս երկկողմանի յարաբերութիւնները ամբարշտելու եւ փոխադրութեանց մարզէն ներս երկ-կողմանի գործակցութիւնը բարելաւելու նոր հեռանը-կարներ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԴԵՍՊՈՒԱՍԱՆ ՄԷՋ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ԱՅԷՅՐԻ

Ֆրանսայի մէջ Լի-բանանի դեսպան Սիլ-վի Ֆատալլա նա-խանգալ գիշեր դես-պանատան մէջ մարո-նիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքի ի

ԿԸ ՆՈՒՐԵՆ

Վարուժան Սեթանի մահուան առիթով, փոխան ծաղկեպապի, տիկին Սե-լիւս Կոնճեան 50,000 Լ. ո., տիար Աշոտ Պապայ-եան 5,000 Լ. ո. Ամբիլիա-սի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին:

ԿԸ ՆՈՒՐԵՆ

Տեր եւ տիկին Սարգիս եւ Հայկուհի Սարեան իրենց գալիկի Լեւոնի եւ Գարլայի ամուսնութեան առթի 500 ամեր. տղար ԲԱՇԼԻ Հայ Երեսօնցիք:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:40.- «Առաւօտեան տոն»

11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում հայերէն
1:30.- Հայաստան-եան լուրեր
3:00.- Արաբերէն յայ-տագիր. հարցազրոյց երաժիշտ եւ յորհող Կի Մանուկեանի հետ ամրո հրապարակած վերջին ալյումին մասին
8:00.- «Բնարային» կը ներկայացուի Սիլվա Կապուտիկեանի բա-նաստեղծութիւնները

ԲԱՆԵՍԱՒՈՐՈՒՄԸ

Տեր եւ տիկին Վեցնա եւ Ատլիոն Գաֆալեան-Շամասեան բախտաւորուած են առջինէլ մանչ գաւակով մը՝

ՎԵՆԱԱ

Պէյրուս, 1
Շուկտեմբեր 2003

ՀԱՍԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ ԸՐԶ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ»Ը

Ժողովուրդի բուռն պահանջին ընդառաջելով Յաւելեմ Լեւոնի (Գերեզմ) Շաբաթ 4 Շուկտեմբեր 2003ին, առաւօտեան ժամը 11:30ին, ԵՆԻՆԵՍԵՕԻ սրահին մէջ:

ՍԱԿ՝ 10,000 Լ. Ո.

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԵՐՐԻՆ

Հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրին, որուն հետ քննարկեց ներքինաբանեան եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ խորհրդարանին կողմէ կատարուող աշխատանքները:

Նախագահ Լահուտի այցելեցին նաեւ ընդհանուր դատախաչ Ատնան Ատտու, եւ պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն Կոր. Էտուար Մանսուր:

ԻՍԱ - ՊԵԹԸԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դես-պան Վինսըթ Պէթըլ երէկ այցելեց արտաքին գործոց նախարարութեան կեդրոնատեղին, ուր հանդիպում ունեցաւ նախարարութեան ընդհա-նուր քարտուղար Մոհամմադ Իսայի հետ:

Հանդիպումին ընթացքին Պէթըլ լիբանանեան կառավարութեան բերանացի պատգամ մը ուղղեց փոխանցել ըսելով, որ Լիբանանի մէջ Կոր. Միշել Աունի դէմ որդեգրուած քայլերը հարաք-կանի տակ կ'առնեն երկրին մէջ իօսքի ապա-տութեան ճակատագիրը:

Պէթըլ աւելցուց, որ արտաքին գործոց նախա-րարութեան մէջ պաղեստինեան Համաս շար-ժումի ղեկավարներուն հաշուեցուցերուն մա-սին Կեդրոնական Դրամատան ներկայացուած պահանջը քննարկումի առարկայ չէ դարձած: Ան ընդգծեց սակայն, որ Ուաշինկթըն վերջնա-կանապէս ծրագրած է «առաքելական կապու-կերպութիւններու» ֆինանսաւորումը հակաը-շիռի տակ առնել եւ այդ շրջագիծէն ներս արդէն իսկ աշխարհի բոլոր երկրներուն պետութիւն-ներէն պահանջուած է կարգ մը կապակերպու-թիւններու դրամատանային հաշիւները սառեցը-նել:

ԽՕՍՔ ՎԵՐԱՄՈՒՏԻ

Շարունակուած Ա. Էջէն

Այո՛, հայ դպրոցը ո՛չ միայն տունն է հայ մանուկին, այլեւ՝ միջնաբերդը հայ ոգիին, ուր հայ տղան ու աղջիկները պիտի կոփ-ւին ամէն օր, հարստական շարունակ՝ ազ-գային, մարդկային եւ հոգեմտաբար վեհ ար-ժէքներով ու պիտի դառնան տիպար հայեր ու քաղաքացիներ:

Ճիշդ է, որ մեր շուրջ կան անդիմադրելիօ-րէն գեղեցիկ ու շլացուցիչ ոչ հայկական վար-ժարաններ, բայց անոնք միայն ուսում շա՛մ-բող կրթական հաստատութիւններ են, ցուրտ քար ու չոր գիտութիւն: Հայ դպրոցը, որ ձեռ-սեպական գանձն է, ձեռ հարապատ տունն է եւ հոգիին ու մտքին դարբնոցը, ընթացիկ կրթարանն է մեր աւելին է. ան դպրոց է ու սրբավայր, մտքի ու հոգիի տաճար, ուր դուք ամէն օր կը մտնէք երկիրում քայլերով՝ «հա-ղորդուելու հայ հոգույն հաց ու գինիով կեն-սառողջ»:

Աւելի՛ն. հայ դպրոցը հարապատ պատկերն է ոգեղէն հայրենիքին, Հայաստանի յարե-րական խորհուրդն է ան, որ Արագածի կա-տարին պլպլացող Լուսաւորիչի կանթեղին լոյսով ամէն օր յաւելեալ պայծառութեամբ պիտի օժտէ ձեր հոգին, ձեպ պիտի փնէ վար-դանի հաւատքով, անբախտ Մեծարայի ուխ-տով եւ օտար քամիներուն դէմ արձակէ Արա-րատի անխոցելի Կորութեամբ վախճանում:

Հետեւաբար, սիրելի՛ աշակերտ-աշակեր-տուհիներ, հարապատի հպարտութեամբ եւ հաստատ քայլերով մտէ՛ք հայկական վար-ժարանէն ներս, շարունակ նոր շունչ ու կեանք տուէք անոր, ձեր յայնպէս՝ ինչպէս շունչը կենսի կու տայ մարմինին, կրակը՝ վառարանին, շունչը՝ ծաղիկին եւ լոյսը՝ հոգիին:

Աստուած թող անասան պահէ ձեպ եւ հայ-կական դպրոցները: Օրինէ՛ ձեպ եւ իր շնորհքն ու հովանին մի շտ ըլլան ձեր վրայ՝ այժմ եւ յաւիտեանս:

«ՀԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԱՅՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Հայ Առաքելական Եկեղեցույ Եղբայրակցու-թիւն»-ը քաջակերտած իր երկամեայ ծառայութե-ան, Ս. Աստուածածին մատրան մէջ (Պիթիայայ), կազմակերպած է հոգեւոր երեկոցներու վեցամսեայ ծրագիր մը, Սեծի Տաճն Կիլիկիոյ կաթողիկոսու-թեան Զրիստոսեան Դաստիարակութեան Բա-ժամունքին եւ Դպրեպետի տեսչութեան գործակ-ցութեամբ:

Յայտագիրը կ'ընդգրկէ երաժշտութիւն, աղօթք-ներ, վկայութիւններ, դասախոսութիւն եւ գրոյց: Դասախոսութիւնները պիտի վարեն Սեծի Տաճն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան հայրերը, երկու շաբաթ անգամ մը, Չորեքշաբթի օրերը, երկուշաբթի ժամը 8:00ին:

Սիրով հրաւիրուած եւ ներկայ գտնուելու տոյժ հոգեւոր երեկոցներու բացման հանդիսութեան երաժշտական յատուկ յայտագրին

ՆԻԿՈԼ ՊԵՉԵՆԿՆԻ «ՎՐՐՎ»Ը՝ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ՀԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Ինչ 8 Հոկտեմբերին տեղի ունեցող Միջին Արևելքի շարժապատկերի փառատօնին ծիրանյան ներս այսօր տեղի պիտի ունենայ լիբանանահայ բեմադրիչ Նիկոլ Պեչենկանի «Վրրվ» գեղարվեստական կարճ ժապավենին ցուցադրությունը: Ժապավենը պիտի ներկայացուի գիշերան ժամը 10:30ին, Ամփիրի «Մոֆիլ» սրահին մէջ:

«Վրրվ»-ի երկրորդ ցուցադրությունը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 6 Հոկտեմբերի երեկոյան ժամը 5:30ին, դարձեալ Ամփիրի «Մոֆիլ» սրահին մէջ:

15 վայրկեան տևողութեամբ «Վրրվ»-ը իրապատուկ ու վիպային միաձուլումն է գեղարուեստի երկու մարմերու՝ շարժապատկերին եւ պարարուեստին, այս պարագային՝ հայկական պարային արուեստին: Հայկական սենսացիոն տաղանդաւոր արուեստագիտուհի Շաքէ Աւանեսեանի հեղինակած շարժումները հանդիսատեսին շատ բան կը փոխանցեն հայկական մշակութային եւ հայրու հոգիին մասին:

«ԱՉԴԱԿ»Ի ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՐՅԱՆՔԻ ԱՐԴԻՒՆՔ

«Ազգակ»-ի մշակութային մրցանքին մասնակցեցաւ 36 հոգի: Հարցարանին լրիւ ճիշդ պատասխանեց 11 հոգի: Յետ վիճակագրութեան, Լենա Արզարեան կը շահի նուէրը՝ գեղանկարիչ Յովսէփ Գասպարեանի գործերէն մէկը: Բախտաւորէն կը խնդրուի Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2003ին ներկայանալ «Ազգակ»-ի խմբագրատուն եւ ստանալ նուէրը:

ԳԵՂԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Կազմակերպութեամբ՝
Հայ Եկեղեցւոյ Համալսարանական
Ուսանողներու Միութեան
Հովանաւորութեամբ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Արուեստագետ գեղանկարչուհի
ՕՐԴ. ՄԱՐԱԼ ՏԵՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ
Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2003ին,
երեկոյան ժամը 7:30ին, Աճախի
«Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ:

ԾԱՆՕԹ.- Ցուցահանդեսը պիտի շարունակուի
ամեն օր, մինչեւ Ուրբաթ, 10 Հոկտեմբեր 2003,
առաւօտեան ժամը 10:00էն
մինչեւ երեկոյան ժամը 7:00:

ԵՐԱԵՐ

ՄԱԱԼՈՒՑ ԲՆԱԴԱՏԵՑ ՊԸՐՐԻԻ ԶԱՇԼԵ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխան Եուսէֆ Մաալուֆ երէկ խստի քննադատեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրիի Ձախէ այցելութիւնը, դիտել տալով, որ նշեալ այցելութիւնը կ'ընդգրկէ քաղաքական նպատակներ, հակառակ բարգաւաճման բնոյթը կրող իր շրջագիծին:

Մաալուֆ յայտնեց, որ Ձախէ երբեք իրապարակ պիտի չդառնայ իսլամ շիի համայնքին եւ Ամալ շարժումին միջեւ քաղաքական հաշիւներ լուծելու:

Նշեալ յայտարարութիւնները Մաալուֆ կատարեց իր բնակարանին մէջ կատարած մամուլի ասուլիսին ընթացքին:

ՎԱՌԵԼԱՆԻԻԹԻ ՆԵՐԱԾՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՔԻՆԱՐԿՈՒՄ

Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան խորհրդարանական յանձնախումբը երէկ, նախագահութեամբ երեսփոխան Մոհամետ Քապպանիի, գումարեց ժողով մը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Այոպ Հրմայէտ:

Ժողովին քննարկումի առարկայ դարձաւ ներածումներու յատուկ թիւ 10842 օրինագիծը, որուն հիմամբ վաւերացուեցաւ վառելիքի գներով համաձայնագիրը, կառավարութեան եւ բարգաւաճման իսլամական դրամատան միջեւ գործակցութեամբ:

ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Լիբանանեան եւ շրջանային լուսարձակները իր վրայ հրաւիրած երաժիշտ եւ յօրինող՝ ԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ Հիմնադրութիւնը, 2 Հոկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին կը պատասխանէ ՀԱԼԱ ՀԱՍՏԱՏԻ հարցումներուն, որոնք կ'առնուին իր վերջին ակտիւմը, որ օրերու իրապարակ կ'իջնէ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

Հրապարակի վրայ է Ճահանդուխտի «ՃԱՄԲԵՂՐԻ ԶՐՈՅՆԵՐ» գիրքը: (Հրոյցներ լիբանանցի արուեստագետներու հետ) Համազգայինի «Վախ Եթեան» տպարան:

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

2004 տարուան պետական պիտուէն, անոր շուրջ ստեղծուած կասկածներն ու մտավախութիւնները, երկրի մէջ տիրող անկայուն կացութիւնը եւ գերհետաքննչական հարցը կը հանդիսանան լիբանանեան կեանքը յուզող այն հարցերը, որոնք կը գրաւեն լիբանանեան օրաթերթերուն գլխաւոր դիրքերը:

Միջպագային եւ շրջանային լուրերու կարգին պարզեցումներն տագնապը, նոր կառավարութեան կայունութեան գործընթացը, իրաքեան իրադարձութիւններն ու վարագումները, ինչպէս նաեւ ընդհանրապէս միջին արեւելեան հարցերը կը շարունակեն մնալ օրաթերթերուն գլխաւոր լուրերը:

ԻՐԱԶԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«Սաֆիր» գրած է, թէ Իրաքի իշխող խորհուրդին համաձայն, սահմանադրութիւն մշակելու համար Փաուրի ճշմարտութեան անկաշարք անբարար է, իսկ Շայապի կը պահանջէ աներկեան մնալուն ռազմական անվտանգութեան հաստատում:

Ըստ թերթին, Փաուրի Տիրոյթի խորհրդածուրդին արաբ մասնակցողներուն պահանջողական կեցուածքը գրգռելով կը յայտարարէ, թէ Իրաքի մէջ տեղի ունեցող վարագումները հիանալի են, իսկ պաղեստինեան ծրագիրները ներկայիս յետաձգուած են:

«Նահար» դիտել տուած է, թէ խորհրդածուրդին ընթացքին Մէուտ Ֆայսալ իշխանի հաստատեց իր վճռականութիւնը դիւանագետներու խորհրդակցութեան հարցերը, որ առանց բարեկարգումներու իրագործման Միջին Արեւելքը պիտի մնայ բռնութեան եւ սիւրբեկութեան աղբիւր:

Թերթը նշած է, թէ Իրաքի մէջ կառավարութիւնը մը կը կայմուի իրաքցիներուն եւ բռնադատեալներուն եւ բռնադատեալ ուժերու որոշումներուն յայտնակ:

«Առանց նոր Միջին Արեւելքի, շրջանային պիտի մնայ ահաբեկչութեան աղբիւր», ըսած է

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

السيرة النبوية

Փաուրի, աւելցնելով, թէ արաբ բոլոր դեկավարները պետք է հետեւին Իրաքի օրինակին, գրած է «Քիֆահ Արապի»:

Ըստ թերթին, Ուաշինգթոն իր քաղաքական որոշումը փոխելով կը հաստատէ, թէ Իրաքի պիտուորական գունդերուն դեկավարութեան գլուխը ինք պիտի մնայ:

ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Լիուս» գրած է, թէ Ֆահի իշխանի եւ Մուսայի կեցուածքները նոյնացան Իրաքի հարցով եւ անոնք նշեցին, թէ աշխատանք պիտի չիսայն շրջանի մէջ արդարութեան հաստատման համար:

Ըստ թերթին, իսրայէլի խառնամիջեւ տեսակցելէ ետք կոչուող իսլամ պետութեան ներքին Ամերիկայի դէմ դաշնակցելու:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Պէր խոստովանեցաւ, թէ իր կուսակցութեան մէջ երկփեղկուած տեղի ունեցած է եւ յայտնեց. «Ամերիկայի շփացած շուրջ չենք»:

«Մուսաբապալ»-ի համաձայն, Ֆայսալ յայտարարեց, թէ յառաջիկայ տարի կ'իսրայէլի տեղի երեսնամեակի փոխարինուի:

«Նահար» գրած է, թէ մահաւախեց Էտուարտ Մաիտ փափաք յայտնած է Լիբանանի մէջ թաղուելու եւ ներկայիս այդ գործընթացը կը կատարուի անոր դիակը Միացեալ Նահանգներէն Լիբանան փոխադրելու:

«Սաֆիր»-ի համաձայն, Յովհաննէս Պօղոս Բ. պապին առողջութիւնը վատ է:

«Տիար» գրած է, թէ Պարատիի յայտարարեց, թէ Իրանի կորիպային պէնթերու հարցով յառաջիկայ շաբաթները ճակատագրական պիտի ըլլան, իսկ միւս կողմէ Իրան կը քննադատէ եւրոպական կեցուածքը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Լիբանանի Երջանային Վարչութիւն
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100 ԱՄԵԱԿ
ARAM KHATCHADOURIAN 100th ANNIVERSARY

Under The Patronage of H.E.
MR. GHAZZI AL ARIDI, Minister of Culture

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Հայաստանի Պարարուեստի Պետական Անսամբլ

Գեղարուեստական Ղեկավար՝
Մոսէս Խորենացիի Անուան Շֆանջանակիր՝
ՆՈՐԱՅՐ ՄԵՀՐԱՊԵԱՆ

THURSDAY 2 OCTOBER
SATURDAY 4 OCTOBER
2003
AT 8:30 PM IN UNESCO PALACE

Tickets on Sale: Down Town
 BHV Jnah
Hamazkayin Library • Discotheque Geka
Studio Vatche Library Obelix Antelias

معهد بيلوس

للتعليم المهني والتقني

BT
بكالوريا فنية

TS
إمتياز فني

TDS
تكنولوجيا الاختصاص

- منهاج فرنسي. منهاج إنكليزي -
خريجو معهد بيلوس يشكلون ظاهرة حضارية وإقتصادية في لبنان والعالم

كن واحداً منهم
للمراجعة والتسجيل

* فرن الشباك - سنتر أبراج ١/٢٩٢٥٦٧
* حارة حريك - طريق المطار ١/٢٧٣٨٦٣
* الدورة - بناية الضمان ١/٨٩٤٦٠٠
* عين زحلنا - الشوف ٥/٢٣٠٤٠٠

ՆԱՍԱԿ՝ ԸԱՅՐԵՆԻՔԷՆ

ՍԵԼԻՄԻ ԼԵՌՆԱՆՑՔՈՎ

Անցեալ ամսուան ընթացքին երկու անգամ այդ նամբան կտրած եմ: Շուշիէն եղեգնածոր արդէն հինգ, հարազատ նամբան է: Նորը, եղեգիս գետի ու համանուն գիւղի կողքով բարձրացող ու բարձրացնողն է, որ Սելիմի Քարաւանատուն հանգրուանելէ ետք, տակաւին կը բարձրանայ մինչեւ Մարտունի: Առաջին անգամ այդ նամբան անցած ըլլալու կախարհանքը կ'ապրէի, Նորավանքէն ինծի միացած ընկերոջս՝ հեղուարդ Մարտունիի, անոր գաւկից՝ Միհրանին եւ հարսին՝ ձանիկին հետ: Երիտասարդ Մարտունիներու առաջին այցել էր Հայաստան եւ եղուարդ ամէն ձեռով կը ջանար գանձեր հիացնել հայրենիքի գեղեցկութեամբ եւ հմայել անոր քաղցրութեամբ: Կարծեմ յաջողեցաւ:

Երկրորդ անգամ արդէն ես կ'ուզէի գարմացնել Հայաստանը լաւ շրջած ընկերոջս՝ Վարուժան Գունտաբեանին, եւ Քեսապէն ու Քալիֆորնիայէն իրարու տեսնելու համար Երեւան եկած Յակոբեան Յակոբին, Կարոյին եւ իրենց քրոջ՝ Սիրվարդ Կարպաշեանին: Կարծեմ գարմացնու: Առաջին անգամ նամբան տակաւին չէր ամբողջացած եւ ստիպուած որոշ տեղեր պէտք է անցնէինք փոշոտ ու բարբարոս արահետներէ: Երկրորդ նամակարձորդութիւնը արդէն շատ ակնի դիրքին էր, որովհետեւ այդ կարճ ժամկետին մէջ նամբան շինութիւնը գրեթէ լրիւ աւարտած էր:

Շուտով երեւի նախագահ Քոչարեանը պաշտօնապէս կը կատարէ բացումը Հայաստանի ներքին հարազատականութեան ցանցի կառուարգոյն օգակներէն մէկը հանդիսացող այս նամբան եւ այդ առիթով վստահ եմ, որ շատ ու շատ պիտի խօսուի անոր տնտեսական եւ ռազմավարական նշանակութեան մասին: Կը բաւէ ըսել, որ բոլորովին տարբեր կլինայական պայմաններով օժտուած, եւ հետեւաբար գիւղատնտեսական տարբեր մթերքներ արտադրող շրջաններ այս ձեռով իրարու կապուեցան կարճ ու յուսալի նամբանով՝ բարձր եւ բարձրաւան կենցիկ յոյս ներշնչելով անոր երկու կողմերուն փոռած եւ մինչ օրս բոլորէն մոռցուած գիւղերուն: Մէկ օրինակ միայն Մարտունիի գետնախնձորը հիմա շատ ակնի մասն պիտի հասնի Վայոց Ձոր, Սիւնիք ու Արցախ:

Ձրօսաշրջութեան զարգացման համար այլ այս նամբան կը բանայ նոր կարելիութիւններ: Վերջ ի վերջոյ Մետաքսի նամբան մէկ փորձ հատուածն է այս եւ Սելիմի Քարաւանատունը ինք բաւական հրապուրելի կառոյց է մասնագետներուն ու զրօսաշրջիկներուն համար: Արդէն երկրորդ երթալուսն ակնաւոր հայ եւ օտար հիւրերը, որոնք կը վայելէին Չեսար Օրբելեանի Իշխանի կողմէ 14րդ դարուն կառուցուած եւ «միջնադարեան Հայաստանի հազուագիւտ քաղաքացիական ամբողջական շինութիւն հանդիսացող» այս իւրաքանչեւ «պանդոկ»-ի գեղեցկութիւնը:

Իւրաքանչեւ հայ հաւանաբար տարբեր անականներով ու բառերով պիտի փորձէ գնահատել Քրքր Գրքարեանը, որուն դարձեալ կը պարտինք այս նամբան ասֆալտապատումը: Քանի մը օր առաջ, Վարուժան Երեւանի տան մէջ առիթը ունեցած էի հանդիպելու «Լինսի»-ի ներկայացուցիչ ու Հայաստանեան գործունէութեան վերահսկող Յարութ Սասունեանին, որուն մենք փոխանցեցինք մեր երախտագիտութեան զգացումները: Անգլերէն լեզուով իր հետաքրքրական սիւնակով հանրաճանաչ Յարութը յաջորդ օրն իսկ պէտք է անցնէր այս նամբանով աչքով տեսնելու համար կատարուած աշխատանքը:

Անշուշտ, ինչպէս ամէն հայ, պաշտօնեայ թէ հասարակ քաղաքացի, այս օրերուն անկազմի մենք ալ կը սպասեք, թէ արդե՞ք «Լինսի»-ն պիտի շարունակէ՝ այսօրինակ ծրագրերուն հովանաւորումը Հայաստանի տարածքին: Հայաստանի տնտեսական դրական շարժի շարունակման ամէնէն մեծ գրաւակար յայտարար «Լինսի»-ի նոր ծրագրերը կրնան ըլլալ: Դժբախտաբար ուրիշ գործօններ տակաւին շատ հեռու եւ նոյնչափ կամ նոյնիսկ նուազագոյնս իսկ համեմատելի ազդեցութիւն ունենալէ հայրենիքի տնտեսական կենցիկը վրայ:

Յարութը, իբրեւ ճշմարիտ արհեստավար, ոչ մէկ նշան տուաւ, որուն կառչած կրնայիք թիւ տալ մեր լաւատես հետնակարներուն: Ոչ ալ, անշուշտ, հակառակ ըրաւ, մեզ ձգելով նոյնքան անորոշ, թէ ինչ պիտի ըլլայ Նոյնեբեր մէկէն ետք, երբ պիտի աւարտի «Լինսի»-ի ծրագրերի հովանաւորած աշխատանքներուն ժամկետը:

Մինչ այդ, Սելիմի լեռնանցքը արդէն կարելի է բացուած յայտարարել ու արդէն կարելի է այս տեղանքը հետախուզելու, ծախաբար վաճառել, Սմբատաբերդը, եւ դեռ շատ ու շատ ուրիշ պատմամշակութային կործանող տեսնելու հանելի գործին ձեռնարկել:

Կը հրաւիրեմ ձեզ ալ: Գրեցեք ինծի:

ԱԲՕ ՊՈՂՆԻԿԵԱՆ

Mherapo@hotmail.com

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ - ԿԼՈՐ ՍԵՂԱՆ - ԿԼՈՐ ՍԵՂԱՆ - ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ՏԱՐՔԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ ԿԸ ԽՕՍԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԱԳՆԱՊՆԵՐՈՒՆ, ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՀԱՒԱՍԱՐԱՊԷՍ

«ԱԶԳՒԱԿ».- Ընդհանրապէս ի՞նչ միջոցառումներու կը դիմուին հայ աշակերտութիւնը մեր դպրոցներուն շուրջ պահելու, այլ խօսքով մեր դասաւանդման մեթոտը կը համապատասխանէ ժամանակակից արդիական մեթոտներուն, մեր ուսուցիչներուն պատրաստուածութիւնը ընդունելի է, կամ անոնք վերադասարանում ման դասընթացներու կամ սեմինարներու կը հետեւին՝ եւ ի՞նչ արդիւնք կու տան դպրոցներուն մէջ:

Այս ծիրին մէջ նաեւ կարգապահական ի՞նչ հարցեր կը դիմագրւեն մեր դպրոցները, եւ այսօր կարգապահական դրութիւնը ինչպիսի՞ն է մեր մօտ:

Ուսուցիչ - աշակերտ փոխ յարաբերութիւնը ի՞նչ մակարդակի վրայ է, մանաւանդ որ այս հարցը այսօր համաշխարհային չափանիշով տագնապ է բուրձնողովորդներուն մօտ:

ԳՈՆՀԱՐ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ.- Մինչեւ հիմա մեր վարժարաններուն մէջ կիրարկուած դասաւանդման մեթոտները պէտք է թերագնահատել, սակայն անոնք կը գտնուին արդի դասաւանդման եւ դպրոցափարական ձեւերուն հետ քայլ պահելու անհրաժեշտութեան դէմ յանդիման: Մեր վարժարաններուն մէջ դասաւանդող ուսուցիչները պէտք է համապատասխան փակայամակներու նկատմամբ ուսուցչական կազմերը պէտք է հետեւին սեմինարներու եւ ուրբալիքներու, որովհետեւ այս ծիրին մէջ մնայուն կերպով նորութիւններ կան եւ ուսուցիչները պէտք է միջառնապատասխան անոնց հետ:

Հոս մեր վարժարանները դժուարութեան դիմաց կը գտնուին նիւթական պահանջարկի եւ ուսուցիչներուն մասնակցութիւնը ապահովելու առումով, սակայն կարելի եղած չափով պէտք է քայլ պահել անոնց հետ տարին գործէ երկու անգամ պէտք է նման նախաձեռնութիւններ կատարել, որովհետեւ որքան ալ այդ նիւթերը ծանօթ ըլլան, նոյնիսկ կրկնուեցան գնով կ'արժէ գանձել լսել եւ կիրարկել: Ուսուցիչը դասարանին տնտեսական կարողութիւնն ու ինքնավստահութիւնը ուղղակի կ'ազդեն աշակերտներուն եւ դասընթացքին վրայ: Ուսուցիչը նաեւ պէտք է նկատի ունենայ դասանիւթի հետաքրքրական եւ ամբողջական ձեւով փոխանցելու պարագան եւ այս բոլորին առկայութեամբ կարգապահական հարցերն ալ կը լուծուին ինքնաբերաբար: Հոս կրկին շեշտը պիտի դնեմ մասնագիտացման վրայ որովհետեւ այսօր դպրոցավարութիւնը, մասնավարութիւնը, դասաւանդման ձեւերը

առանձին մասնագիտութիւններ են: Կարգապահական հարցերը լուծելու մասնագիտական հարցերը կան նաեւ, եւ հոն պէտք է նկատի առնուին աշակերտին պարագան, տարիքը, պայմանները. անոր համար կրկին կը շեշտեմ վերադասարանում անհրաժեշտութիւնը: Սկզբունքներուն եւ դասաւանդման ձեւերուն ծանօթ ըլլալէ ետք ուսուցիչին կը մնայ այդ կանոնները պատշաճեցնել եւ կիրարկել:

ՍԵՒԱՆ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ.- Դասարանին մէջ ուսուցիչը «թագաւոր» է եւ տնօրէնութեան կը մնայ վերահսկել անոր աշխատանքին եւ հետեւելի դասաւանդութիւններուն: Ուսուցիչ մը միշտ ակնի ինքնավստահ կ'ըլլայ եթէ հակողութիւն կայ եւ դասարաններուն միջեւ համակարգում տեղի ունենայ: Այս մէկը դպրոցավարութեան հիմնական տուեալներէն է:

«ԱԶԳՒԱԿ».- Այս կը նշանակէ, թէ դուք կը կարծէք, որ տնօրէնը մեծ դերակատարութիւն ունի նաեւ դասարանին մէջ եւ կը հաւատարմաւ յայտարարէ ինչ որ ինչ, որուն գլուխը տնօրէնը կը կանգնի:

Ս.Պ.- Ես կը կարծեմ, որ հայկական դպրոցի մը տնօրէնը 20 ձեռքով պէտք է գրկէ երկու ձեռքով, եւ մենք շատ մը ակնկալութիւններ ունինք անկէ: Ան պէտք է ծնողներուն հետ խօսի, արտաքին կապեր հաստատէ, ուսուցիչներու աշխատանքին վերահսկէ, կրթական ծրագրեր մշակէ, կարգապահութեան հսկէ, նիւթապահութեան հսկէ, պէտք է դպրոցը ներկայացնէ այլապէս ձեռնարկներու եւ այլն: Այս մէկը ոչ մասնագիտական, ոչ ալ տրամաբանական է եւ անիկա ապարդիւն է: Ես կը կարծեմ, որ գործը պէտք է երկուքի բաժնուի եւ նախ անոր կ'ընթական համար կարող է ըլլալ, որ տնօրէնին ուսէն պիտի վերցնէ կրթական համակարգի կազմակերպումն ու հետեւի անոր իրականացման: «ԱԶԳՒԱԿ».- Ինչու մեր դպրոցները այդ սիւսերուն մէջ պէտք եղած ձեւով: Ուսուցիչներու դասընթացները շատ կարեւոր են երկու առումով. նախ քան պահել նորութիւններու հետ, իսկ երկրորդ - ուսուցիչներու հանդիպել: Այս երկուքն ալ իրենց կարգին կը հարստացնեն ուսուցիչը: Ուսուցիչ - աշակերտ յարաբերութեան պարագային վերջերս նկատած եմ, որ գանազան երկիրներու մէջ նոր կ'անդրադառնան ծնողք - ուսուցիչ փոխ յարաբերութեան եւ կը փորձեն կապը սերտացնել աշակերտներուն տուները այցելելով, լսել մը որ մեր մօտ շատոնց արդէն կը կատարուէր:

ՍԵՊՈՒՀ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ.- Ամբողջ շրջանին ազգային վարժարաններուն համար կազմակերպուած սեմինարին ընթացքին ի յայտ եկաւ, որ անոնց ունեցած փոփոխութիւնները բաւական գնահատելի են եւ հարցը միայն նորութիւններուն հետ քայլ պահելու դասաւանդման հարցն է: Այսօր նիւթերու դասաւանդման գրագահու շատ անհրաժեշտ է անոր դասաւանդման մեթոտները: Հայկական դպրոցներուն մէջ կարեւոր է նաեւ հայ լեզուի եւ նիւթերու դասաւանդման նոր ձեւեր պահելու եւ Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը այս առնչութեամբ յատուկ դասընթացներ կազմակերպած է:

«ԱԶԳՒԱԿ».- Հայկական դպրոց ըլլալու կողմէն լաւ դպրոց մը ըլլալու մեր բոլոր ծրագրերը եւ փոփոխութիւնները առկայ են: Արդեօք մենք մեր ուսուցիչները կը գոհացնենք եւ իրենց իրաւունքները (նիւթական եւ ապահովագրական առումով) ամբողջովին կու տանք, որպէսզի իրենք եւս դպրոցին տան եւ

«ԱԶԳՒԱԿ».- Կ'երկրորդեմ

այն կարծիքին, թէ պէտք է թերագնահատել հայ վարժարաններուն մէջ ի գործ դրուած դասաւանդման ձեւերը եւ անոր ապացոյցը մեր դպրոցներուն հասցուցած սեփականութիւններն են: Սակայն հակառակ ասոր, պէտք է ճշտել ըլլալ եւ քայլ պահել նորութիւններուն հետ: Ես կը հաւատամ, որ կենսաբան դպրոց է եւ ժամանակը շատ բան կ'ուսուցանէ մարդուն: Ըստ ինծի, ուսուցիչը ինք պէտք է ինքնաշխատութեամբ քայլ պահէ նորութիւններուն հետ եւ դպրոցն ալ իր կարգին լաւագոյնս ապահովէ ուսուցիչներուն: Դպրոցի տնօրէնը իր աշխատանքը լինելի կատարելու համար պէտք է ունենայ իր օգնականները, որպէսզի ինք կարելիութիւն ունենայ դպրոցի յառաջդիմութեան վերաբերող հարցերով զբաղել: Վերադասարանում մը պէտք է ընդգրկէ ոչ միայն ուսուցիչները, այլ նաեւ պաշտօնէութիւնն ու վարչական կազմը: Կարգապահական հարցին առնչութեամբ ընկալուած կարգապահութեամբ: Կարգապահութիւնը կը սկսի տնօրէնէն մինչեւ դասաւանդող: Ես կը կարծեմ, որ կարծուածութիւնը երբեմն շատ արթն է ուսուցիչը որքան ալ պատրաստուած ըլլայ կրնայ նոյնիսկ անկախ իր կամքէն թերանալ, անոր համար տնօրէնին կամ համակարգողին պարտականութիւնն է հետեւել անոր, նախ դրուած ծրագիրներուն, ապա անոր կատարած աշխատանքին եւ ծրագրի իրականացման գործընթացին:

«ԱԶԳՒԱԿ».- Կարգապահական հարցերը լուծելու մասնագիտական հարցերը կան նաեւ, եւ հոն պէտք է նկատի առնուին աշակերտին պարագան, տարիքը, պայմանները. անոր համար կրկին կը շեշտեմ վերադասարանում անհրաժեշտութիւնը: Սկզբունքներուն եւ դասաւանդման ձեւերուն ծանօթ ըլլալէ ետք ուսուցիչին կը մնայ այդ կանոնները պատշաճեցնել եւ կիրարկել:

«ԱԶԳՒԱԿ».- Այս կը նշանակէ, թէ դուք կը կարծէք, որ տնօրէնը մեծ դերակատարութիւն ունի նաեւ դասարանին մէջ եւ կը հաւատարմաւ յայտարարէ ինչ որ ինչ, որուն գլուխը տնօրէնը կը կանգնի:

Ս.Պ.- Ես կը կարծեմ, որ հայկական դպրոցի մը տնօրէնը 20 ձեռքով պէտք է գրկէ երկու ձեռքով, եւ մենք շատ մը ակնկալութիւններ ունինք անկէ: Ան պէտք է ծնողներուն հետ խօսի, արտաքին կապեր հաստատէ, ուսուցիչներու աշխատանքին վերահսկէ, կրթական ծրագրեր մշակէ, կարգապահութեան հսկէ, նիւթապահութեան հսկէ, պէտք է դպրոցը ներկայացնէ այլապէս ձեռնարկներու եւ այլն: Այս մէկը ոչ մասնագիտական, ոչ ալ տրամաբանական է եւ անիկա ապարդիւն է: Ես կը կարծեմ, որ գործը պէտք է երկուքի բաժնուի եւ նախ անոր կ'ընթական համար կարող է ըլլալ, որ տնօրէնին ուսէն պիտի վերցնէ կրթական համակարգի կազմակերպումն ու հետեւի անոր իրականացման: «ԱԶԳՒԱԿ».- Ինչու մեր դպրոցները այդ սիւսերուն մէջ պէտք եղած ձեւով: Ուսուցիչներու դասընթացները շատ կարեւոր են երկու առումով. նախ քան պահել նորութիւններու հետ, իսկ երկրորդ - ուսուցիչներու հանդիպել: Այս երկուքն ալ իրենց կարգին կը հարստացնեն ուսուցիչը: Ուսուցիչ - աշակերտ յարաբերութեան պարագային վերջերս նկատած եմ, որ գանազան երկիրներու մէջ նոր կ'անդրադառնան ծնողք - ուսուցիչ փոխ յարաբերութեան եւ կը փորձեն կապը սերտացնել աշակերտներուն տուները այցելելով, լսել մը որ մեր մօտ շատոնց արդէն կը կատարուէր:

ՍԵՊՈՒՀ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ.- Ամբողջ շրջանին ազգային վարժարաններուն համար կազմակերպուած սեմինարին ընթացքին ի յայտ եկաւ, որ անոնց ունեցած փոփոխութիւնները բաւական գնահատելի են եւ հարցը միայն նորութիւններուն հետ քայլ պահելու դասաւանդման հարցն է: Այսօր նիւթերու դասաւանդման գրագահու շատ անհրաժեշտ է անոր դասաւանդման մեթոտները: Հայկական դպրոցներուն մէջ կարեւոր է նաեւ հայ լեզուի եւ նիւթերու դասաւանդման նոր ձեւեր պահելու եւ Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը այս առնչութեամբ յատուկ դասընթացներ կազմակերպած է:

«ԱԶԳՒԱԿ».- Կ'երկրորդեմ

անոնցմէ կարելի ըլլայ արդար ակնկալութիւններ ունենալ իրենց տրուած ծիրին փոխարէն:

